

որոնք գծին վար միաձեռն կը զանազանունին իրենց գլուխներով, անոնց կեցուածքը ինչպէս սիրնքս մը նկարագրական տեղ ունի հայ այբուբենի մէջ:

Որ կողովածեւ մասը շատ լայն եւ խոր բռնուած է. ինչպէս վերագոյն յիշեցի, գրիս հիմնական մասն է այդ կողովածեւը, որ ասորական ա գիրն է, կցուած ձողիկին մէջ տեղ համաչափութեան համար. այդ մասը պէտք է զուգակշիռ ա ի վ եւ այլ գրերու, ուստի՝ «վար», ինչպէս ընդունուած է բոլորգրին մէջ:

Ը գիրը, որ ընկերն է գ ղ վ գրերու, եւ յաճախ բառերու վերջը ունի իր վեհաժառ նիստը, ինձ կը թուի թէ պահելու է անփոփոխ: Իր ծագումը յունական Իղ էն է, որուն բոլորգրը նոյնպէս սողէն վար կ'երկարի:

Թ դասուած է նոյնպէս կարճ գրերու շարքին. ծագումով յունարէն Թ գրէն, աւագ եղբայրն է Ժ գրին. երկուքի մէջ ալ յունարէնի հորիզոնական գիծը նկարագրական է եւ պէտք է անփոփոխ պահել:

Յ գիրը նմանութեամբ լատ. յ գրին թոյլ պոչով ձողիկ մը կ'ընծայէ. բոլորգրը «յ» ծագած է երկաթագիր Յի վարի մասէն, իսկ երկաթագիրը կ'ընթացէ յն. օ.

Փ ինչ հարկ կայ գրիս օտար նկարագիր տալ, երբ նա իր մէջ ընդունակ է վ եւ ի տառերու նկարագրով բարեփոխուելու:

Հայերէն այբուբենի մէջ մի գիր ունի իր առնական, աննկուն նկարագիրը. ինչ կերպարանքի տակ ալ բարեփոխուի գիրը, պէտք է պահպանէ այս արտակարգաւ խօսուն ոգին: Իմ կարծիքով հարկ չկայ ձեռնամուխ ըլլալ այբուբենի ձեւափոխումի գայն արդիականացնելու համար, բայց պէտք է բարեփոխել անոր կեցուածքը, գոյն, երանգ տալ անոր դէմքին, աւելի կենդանի, աւելի խօսուն ընծայելու համար անոր արտաքինը: Սովորական բոլորգրին կից կենդանութիւն չնորհելու է նորագրին, այժմ արդէն դադրած գործածութենէ, Այտրեանի արդի գիրն (moderne) եւ անոր շղագիրը (italique) սքանչելի օրինակներ են տառերու արդիականացումի. նոյն սկզբունքով բարեփոխելու է բոլորգիրը սովորական գործածութեան համար: Աւելին ի չարէն է:

Հ. Ն. Ա.

«ԲԱԳՄԱՎԷԿ» ՀԵՐԻԻՐԸՄԵՆԿԸ 1843—1943

«Բագմավէպ» ամսագիրը, պաշտօնաբերքը վեներտիկի մեծարգոյ Միխայիլեան Միխայիլեանի, միակն հանդիսացաւ Հայ Լրագրութեան Պատմութեան մէջ, որ բոլորեց իր միադարեան շրջանն անայսթափ:

Չասանեցաւ, չքնկնեցաւ ան յեղափոխ ժամանակներու արեւախրքներու առջեւ, այլ միշտ բարձր բռնած իր փառապանծ դրօշը՝ տարաւ գայն յաղթական քայլերով յառաջադէմ: Հայ Մշակոյթի դրօշն էր այն: Եւ իրաւունք ունէր խմբագրութիւնը տօնելու իր ամսօրեայ Հանդէսին հարիւրամեակը իբրեւ տօն հայ Մշակոյթի, որուն ծառայած էր դար մը ամբողջ (17 Հոկտ. 1947):

«Բագմավէպ» իր հայագիտական, գրական եւ գիտական ուղղութեամբ սիրելի եղած էր միշտ հայ ժողովուրդին: Այդ ասպարէզին վրայ հոյակապ ընծայեցան բազմաթիւ գրիչներ՝ Հ. Ա. Բագրատունի, Հ. Գ. Այվազովսկի, Հիւրմիւզեաններ, Հ. Ղ. Ալիշան, Հ. Ա. Սուրբեան, Հ. Գ. Զարբանալեան, Հ. Բ. Սարգիսեան, Հ. Յ. Թորոսեան, Հ. Վ. Հացունի, Հ. Ս. Երեմեան, Հ. Ա. Ղազիկեան եւ այլն եւ այլն, դէմքեր, որոնք, իւրաքանչիւրն իր նիւթին մէջ, բերին իրենց նպաստը եւ գարդարեցին Ուսումնաբերքին էջերը հմտական ուսումնասիրութիւններով եւ ստեղծագործութիւններով:

Մեր մաղթանքն է՝ ad multos annos! ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՀՈՒՆՆ ՀՈՒՆՉՔԸ ՀԵՅԵԳԻՏԵՎՈՆ ԸՍԳԵՐԷՁԻ ՎՐԵՑ

Մօտաւոր անցեալի մէջ, 26 յուլիս 1944. հեճած էր մահուան մանգաղը Հայագիտութեան դաշտի վրայ արժէքաւոր կեանք մ'ալ, Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Նշանեանի, Երուսաղէմի Հայոց արժանընտիր Պատրիարքի, որուն շիրմին առաջ պարտաւոր է Ուսումնաբերքս հոսեցնել ազի արցունքներ յանուն Հայագիտութեան, որուն արդիւնաւոր վաստակաւորներէն էր Հանգուցեալը:

Նշանեան ծնած է 30 սեպտեմբեր 1872 ի Սամաքիս Կ. Պոլսոյ: Այն ինչ 15ամեայ պատանի կ'ուղեւորի Երուսաղէմ հետեւելու հոգեւոր կոչման ժառանգաւորաց վարժարանի մէջ: Կ'աւարտէ ուսման ընթացքը 1891ին: Արեւոյ կը ձեռնադրուի 1898ին: 1924ին կը մեկնի Էջմիածին եւ կ'ընդունի սեպտեմբեր 21ին Եպիսկոպոսական ձեռնադրութիւն: 1939, փետրուար 10ին կը վախճանի Երուսաղէմ Գուշակեան Թորգոմ Պատրիարք. միաբանական ժողովը ապրիլ 19ին փոխանորդ կը հռչակէ Նշանեան Մեսրոպ արքեպիսկոպոսը:

Նշանեան Ս. Յակոբեանց վանքին ակաւոր դէմքերէն մին հանդիսացաւ: Վարեց կարեւոր պաշտօններ ուսուցչական եւ վարչական ասպարէզներու վրայ. 1922ին անուանուեցաւ Լուսարար Ս. Յակոբեանց, աւագ պաշտօն մը, գոր խոհականութեամբ վարեց մինչեւ 1939: Տեղոյս չէ խօսիլ իր պատրիարքութեան կարեւոր շրջանի գործունէութեան մասին, որ համերոպական պատերազմի ազմկալից տարիներուն ինկաւ:

Նշանեան իր պատանեկութեան շրջանը անցուց Ս. Յակոբեանց վանքը երբ կը ծաղկէին հոն Աստուածատուր Յովհաննէսեան, Տրդատ Պալեան եւ Սահակ Խաչատրեան ուսումնասէր միաբան վարդապետները: 1891—1895 տարիներուն, տակաւին երիտասարդ հասակին, կարգուեցաւ տեսուչ Ձեռասարդ հասակին, կարգուեցաւ տեսուչ Զեռասարդ հասակին, կարգուեցաւ տեսուչ Զեռասարդ հասակին: Թէպէտ չարտայտուեցաւ մինչեւ 1913 հրապարակաւ, բայց ցոյց տուաւ ապագան, թէ լուսեան մէջ մեղուաչան աշխատասիրող մ'էր նա: Կ'ուսումնասիրէր Մատենադարանի հայերէն ձեռագիրներն եւ Դիւանի վաւերագրերը, կը հաւաքէր նիւթեր ժե—ժԹ դարերու Հայոց քաղաքական եւ եկեղեցական պատմութեան հայոց եւ կը պատրաստէր հրատարակութեան համար պատմական ամբողջական գործեր:

1915ին լոյս ընծայեց ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղեցոյ, մէկ նմանատիպ պատկերով, Յառաջաբանով եւ Յաւելուածներով, Երուսաղէմ 1915, 80 մեծ, էջ 29+667: Գնահատական մը նուիրուած այս հատորին, Հանդէս Ամսօրեայ 34 (1920) 184—188, կը յայտարարէր ի մէջ այլոց տողերս. «Ձեռն

կրնար այսպիսի ընտիր հրատարակութեան ի տես չյայտնել մեր հիացումն եւ շնորհակալութիւնն աշխատատէր հրատարակչին այս անչափ կարեւոր գրուածքիս համար. ի սրտէ կը մաղթեմք իր գրչին ոյժ եւ յաջողութիւն ի լոյս ընծայելու համար նման պատմական գործեր, յատկապէս հատորիս ծածկոյթին վրայ ծանուցուած երկու ընտիր գործերը...: Աստի պիտի անմահացնեն գիտութեան առջեւ հրատարակչին բարի համբարը»: Այս հատորի տպագրութեան ծախքը հայթայթած էր Սուրբա Սրբեպ. Պարգեան, որ նման որիշ կարեւոր գործերու ալ Մեկեմաս հանդիսացած էր:

2. Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Գեօմիւրճեանի. Շ ո ղ ա կ ա թ Ս. է ջ մ ի ա ծ ի. հայագիտական ժողովածու. Գիրք Ա. Վաղարշապատ, 1913, էջ 47—65: Համասու ուսումնասիրութիւն մ'էր այս, ուր նկատի կ'առնուէին Երեմիայի Օրագրութեան կրկին խմբագրութիւնները, մին պահուած վեներտիկ եւ երկրորդը Երուսաղէմ:

3. Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Գեօմիւրճեանի: Յաւելուած Ա.՝ Թուղթեր. Բ.՝ Ուղերձներ. Գ.՝ Գանձեր եւ Ողբեր: Երուսաղէմ 1839, 80, էջ ձե'ր + 715:

Արդէն 1915ին ծանուցուած էր աշխատութիւնս իբրեւ պատրաստ տպագրութեան. լոյս տեսաւ 25 տարի յետոյ միայն: Երեմիա ժե. դարու կարկառուն դէմքերէն էր. նա ոչ միայն ապրած է իր շուրջը տեղի ունեցած անցքերը, այլ եւ գրի առած է իր տպաւորութիւնները օրը օրին: Մասնակցութիւն բերած է ազգային հարցերու եւ թղթակցած է աչքառու գործիչներու հետ: Շատ բան Երեմիայի ինքնագիր գործերէն պահուած էր Երուսաղէմ: Նշանեան խնամով ուսումնասիրած է Երեմիայի այդ գրութիւնները դուրս կորցելու համար անոնցմէ կարեւորները:

4. Դեռ տպագրութեան կը սպասէ ուրիշ կարեւոր Հաւաքածոյ մը. Կոնդակներ եւ Նամակներ, այն է «Դիւան Ս. Յակոբայ, հաւաքածոյ վերջին չորս դարերու Կարողիկոսական, Պատրիարքական Կոնդակներու եւ եկեղեցական ու աշխարհական յայտնի ազգայիններու բազմաթիւ թղթակցութեանց»: Իցի՛ւ թէ «Դուրեան Մատենադարանի» շարքը գարդարէր եւ ա'յս պատմական վաւերագրներու Հաւաքածոյ մը, որմէ մասեր տուաւ Ս ի ո ն ամսագիր իր էջերու մէջ:

5. *Յուզակ 52 հայերէն ձեռագիր Աստուածաշունչ մատենաներու, որոնք կը գտնուին Ս. Յակոբեանց Չեռագրատան մէջ*: Այս աշխատանքը յանձնուած էր Նշանեանի 1935ին Ս. Գրքի հայերէն քարգմանութեան 1500ամեակի յօրհանական Յանձնախումբի կողմէ. գոր եւ ի գլուխ հանած է մանրակրկիտ նկարագրութեամբ: Յայտնի չէ ինչ պատճառը, քէ այս շատ օգտակար աշխատութիւնը ինչո՞ւ լոյս չէ տեսած նոյն առթիւ եւ կամ այնուհետեւ:

6. *Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի: Գրաբար բնագրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ Եպ. Նշանեան: Հատոր Ա. եւ Բ., Երուսաղէմ 1931, 80, էջ 1Բ + 1387: Թարգմանիչը նոյնացուցած է հատորս կցելով անոր բաժին մը Արձանագրութիւններու եւ Տապանաբերութեան Գրախօսական մը հիմուն. Հանդ. Ա.մ.ս. 48 (1934), 92—94:*

7. *Երուսաղէմ յընթացս զարուց. քարգմանութիւն. տակալին անտիպ:*

8. *Տպարան Առաք. Աթոռոյն Ս. Յակոբեանց. 100ամեայ Յորհիանին առթիւ. Երուսաղէմ 1939 (արտատպուած Ս ի ռ Ն է ն):*

9. *Հատընտիր Պատմութեան Գրքեր: Թարգմանութիւն: Երուսաղէմ 1932:*

Այս տպագիր եւ անտիպ երկասիրութիւններէն առաջին հինգը առաւելապէս կը շարժեն մեր հիացմունքը. անոնց մէջ կը ցցուի Նշանեան իբրեւ խղճամիտ բանասէր եւ յստակամիտ պատմագէտ: Նա միակն է որ ծաղկեցաւ այս ուղղութեամբ Ս. Յակոբեանց Միաբանութեան մէջ: Միտք մը, որ ատակ հանդիսացաւ հրապարակ դնելու այսպիսի հատորներ, կարող էր նա Ս. Յակոբեանց իբր 3700 ձեռագիրներէ աւելի նորութիւններ լոյս ընծայել, եթէ շնորհուած ըլլային իրեն աւելի քաջակերութիւն եւ աւելի ազատ ժամեր:

Յիշատակ արդարոց օրհնութեամբ:

Հ. Ն. Ս.

**† ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՆՈՒՍԵԱՆ**

Տարւոյս յունիս 21ի գիշերը վախճանեցաւ Երեւան վաստակաւոր Ստեփանոս Մալխասեան 90ամեայ հասակին:

Հանգուցեալը ծնած է 25 հոկտեմբեր 1857 Ախալցխա: Նախաւոր կրթութիւնն առած ծննդավայրին կարապետեան ծխական Դպրոցին մէջ, 1874ին կը փոխադրուի Էջմիածին շարունակելու իր ուսման ընթացքը նորաբաց Գէորգեան ձեմարանին մէջ: 1881ի վերջերը կը մեկնի Պետերբուրգ հետեւելու իբրեւ ազատ ունկնդիր Համալսարանի հայագիտական դասախօսութիւններու, միաժամանակ պատրաստուելու պետական ֆեմուքեան: 1887ին կ'արձանագրուի Համալսարանի ուսանող եւ կը յաճախէ Հայ-վրական ուսմանց Բաժանմունքի դասախօսութիւններու: Այն տեղ իրեն դասընկեր կ'ունենայ Ն. Մառը: 1889ին ընդունելով հետամուտի (candidat) աստիճան՝ կը վերադառնայ իր ծննդավայրը: Մալխասեան ընտրած էր իր գործունէութեան ասպարէզ մանկավարժութիւնը: Գործեց 30 տարի անընդհատ այս ասպարէզի վրայ (1889—1919) Ախալցխա, Տփղիս (Ներսիսեան վարժարան, Յովնանեան եւ Գայիանեան Դպրոցներ), Էջմիածին (Գէորգեան ձեմարան), Ադեֆանդրապոլ («Հայկ. Համալսարան») եւ դարձեալ Ախալցխա (վարժարան):

Սկսեալ 1920էն առանձնացաւ Ստ. Մալխասեան իր սենեակը եւ նուիրուեցաւ Բացաւորական Բառարանի մը կազմութեան, գոր եւ հանեց ի գլուխ 1944ին չորս լայնատարած հատորներու մէջ եւ արժանացաւ Ստալինեան Մրցանակի պսակին:

1881—1887 տարիներուն, երբ կը գրտնուէր Մալխասեան Պետերբուրգ, ծանօթացաւ Կ. Եգեանցի: Քաջակերուած անկէ միջամուխ եղաւ Հայոց եին գրականութեան ուսումնասիրութեան: Կ. Եգեանցի հետ ձեռն ի ձեռն հանեց հրատարակ, հանելի գրաբարով, հետեւեալ գործերը.

1. *Բռնի Միութիւն Հայոց Ահաստանի ընդ Եկեղեցւոյն Հոռոմայ: Ժամանակակից Յիշատակարանը*: Պետերբուրգ 1884: Յիշատակարաններս քարգմանուած են լեհերէն բնագրէ. Արարա... քարգմանութիւնս այս հայկական ի ձեռն Ս. Մալխասեանց, առաջարկելով մերով եւ վերակացութեամբ ի գրոց լեզու» կը գրէ Կ. Եգեանց Յառաջարանին մէջ:

2. *Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական: Պետերբուրգ 1885: Յառաջարանին մէջ խօսելով ի մասին Եգեանցի կը գրէ. «որ ոչ միայն պատուեաց զվեգ յանձնարարութեամբ հրատարակութեանս, եւ բարեյօժար կամօք առաջի արար գՁեռագիր ընտիր համակ եւ զմատենադարանն իւր փարթամ՝ այլ եւ օգտակար խորհրդովք իւրովք եւ վերակացութեամբ բազում ինչ ստուար եղեւ լրութեան եւ ձեռն ձեռնարկութեան գործոյս» (էջ ԽԲ—ԽԳ): Գրախօս. ՀԱ 2 (1888) 128:*

3. *Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց: Պետերբուրգ 1887: Յառաջարանին կցած է Եգեանց տողերս. «Ըստ խնդրոյ մերում կազմեաց գրագիր մերոյս տպագրի Ստ. Մալխասեանց, հանդերձ ցուցմամբք տարբեր ընթերցումոցն ի ստորոտ իւրաքանչիւր իջից»: Հմմտ. Հանդ. Ամս. 1888, էջ 128:*

Գեղեցիկ եռանդով սկիզբ առած այս գործունէութիւնը ընդհատուի կրեց երբ նուիրուեցաւ նա ուսուցչական ասպարէզին: Բայց Մալխասեան շարունակեց հետաքրքրուիլ գրական խնդիրներով եւ ժամանակ մանաւանդ լսելի ընել նաեւ իր ձայնը, երբ ժամանակ գրական հարցեր հրատարակ կը դրուէին: Մալխասեան կ'արտայայտուէր ընդհանրապէս Մշակ օրաթերքին մէջ: Յաջորդ ցանկիս մէջ պիտի յիշենք իր գրքի այն յօդուածները միայն, որոնք գրական արժէք կը ներկայացնեն:

Գարուս սկիզբը գրական Յանձնաժողով մը կազմուեցաւ Հայ Պատմագիրներու ֆեմական հրատարակութիւն մը ձեռնարկելու: Այս ձեռնարկութեան վերին Հոգաբարձութիւնը յանձնուեցաւ Ստ. Մալխասեանի, որ եւ յանձն առաւ առաջին Գիրքը պատրաստել աշխատակցութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի:

4. *Ղազար փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ վահան Մամիկոնեան: Տփղիս 1904: Հմմտ. Հանդ. Ամս. 1904: Յաջորդ հատորներն եղան Ազաթանդէշոս (1909) եւ Մ. Պորենացի (1913):*

5. *Սեբէոս եպիսկոպոսի Պատմութիւն քաղաքատեմաբ ձեռագրաց հանդերձ առաջարանիւ եւ ծանօթութեամբք: Երեւան 1939:*

6. *Նայիր ոռուսերէնի քարգմանած. История епископа Себеоса. Перевен с чет-*

вертого исправленного армянского издания Ст. Малкасянц. Ереван 1939, 80, էջ 184.

7. *Ամիրտովլաթ Ամասիացւոյ Օգուարժչութեան: Երեւան 1940:*

8. *Մովսէս Պորենացի. Հայոց Պատմութիւն. Թարգմանութիւն, ներածութիւն եւ ծանօթութիւններ: Երեւան 1940, 80, էջ 1Գ + 368:*

9. *Փաւստեայ Բիւզանդեայ Պատմութիւն Հայոց. Թարգմանութիւն: Կ'ըստի, քէ պատրաստած էր տպագրութեան. բայց անտիպ մնացած՝ մահուան պատճառաւ:*

10. *Սեբէոսի Պատմութիւնը եւ Մ. Պորենացի. մատենագրական ուսումնասիրութիւն: Տփղիս 1899, 80, էջ Է + 118:*

11. *Ուսումնասիրութիւն Փ. Բիւզանդի Պատմութեան: Հանդ. Ա.մ.ս. 1896, էջ 35—43, 81—84, 101—108: Արտատպ. վիճենա 1896, 80, էջ 59:*

12. *Մի նկատողութիւն Փաւստոսի Պատմութեան մասին: Zeitschrift für armenische Philologie. 1 (1903) 64—66:*

13. *Ուղղագրութիւններ Ղ. Փարպեցւոյ Պատմութեան եւ Թղթի, ZAP 2 (1904), 226—233:*

14. *Մովսէս Պորենացւոյ առեղծվածի շուրջը: Երեւան 1940, 80, էջ 156:*

15. *Մովսէս Պորենացւոյ նոր աղբիւրը: Մուրե 1892, էջ 1852—1863:*

16. *Նորագոյն կարծիքներ Մ. Պորենացւոյ Պատմութեան մասին. Մշակ 1898, Թ. 102:*

17. *Մ. Պորենացին քաղկեդոնական էր (Պատասխան Ե. Տէր-Միկայելեանին). Տեպեկագի Գիրք Հայկ. ՍՍՍ. Գիտ. Ակադեմիայի, 1944, Թ. 3—4, էջ 27—54:*

18. *Ե՞րբ են Հայերն ընդունել քրիստոնէսութիւնը: Էջմիածին 1 (1944), Թ. 1, էջ 22—26:*

19. *Մի առեղծուած Նարեկի մէջ: «Յուշարձան», վիճենա 1911, էջ 223—224:*

20. *Հայագիտութիւնը իւր գարի սկզբում: Մուրե 1901, Ա. 157—169. Բ. 192—205. Գ. 128—142. Դ. 101—119. Ե. 161—171:*

21. *Դասընթաց Հայոց Մատենագրութեան Պատմութեան. Ներսիսեան Հոգեւոր Դպրոցի աշակերտների համար: Կազմած Ստ. Մալխասեանցի դասախօսութիւններից: Երկրորդ՝ բարեփոխուած հրատարակութիւն. Թիֆլիս 1908, 80, էջ 288 (վիճակայ):*